ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» Սեպտեմբերի 2020թ. N ՄՈ/396-2020

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴԻՏՈՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1554-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 118-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցի անցկացման հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով.

որոշում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին դիտորդի մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործում է մինչև քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի գործարկումը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 22.09.2020 17:30:43 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2020 թվականի Սեպտեմբեր 22 ի N ՄՈ/396-2020 որոշման

Կարգ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին դիտորդի մասնակցության

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին (այսուհետ՝ Մրցույթ) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են մասնակցել՝ նախապես գրանցվելով:
2. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև փաստաթղթերի ընդունման վերջին օրը հասարակական կազմակերպություններն իրենց ներկայացուցիչներին որպես դիտորդ գրանցելու համար կարող են պաշտոնապես դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար)՝ նշելով հասարակական կազմակերպությունը ներկայացնող անձի կամ լուսաբանող լրագրողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև կցելով հասարակական կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը, կազմակերպության վերջին երեք տարվա գործունեության հակիրճ նկարագրությունը:
3. Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է գրանցել ոչ ավելի, քան 1 դիտորդ:
4. Գլխավոր քարտուղարը, դիմումն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում դիտորդ գրանցելու կամ մերժելու մասին՝ այդ մասին տեղեկացնելով (գրավոր կամ էլեկտրոնային փոստով) կազմակերպությանը: Մերժման հիմք կարող է հանդիսանալ սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված պահանջներին անհամապատասխանությունը:
5. Գրանցված դիտորդները պարտավոր են մինչև մրցույթի հարցազրույցի փուլի մեկնարկը (մրցույթն սկսվելուց առնվազն 20 րոպե առաջ) ներկայանալ մրցույթի անցկացման վայր՝ հանձնաժողովի նախագահին ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
6. Մրցույթին ներկա դիտորդների թվից կախված՝ հանձնաժողովը կարող է որոշում ընդունել մրցույթը տվյալ հաստատության այլ տարածքում անցկացնելու վերաբերյալ:
7. Դիտորդը մրցույթի աշխատանքներին հետևելիս պարտավոր է՝

1) պահպանել չեզոքություն.

2) չմիջամտել (տեսանկարահանում, ձայնագրում, հարցեր տալ) ու չխոչընդոտել հանձնաժողովի աշխատանքներին.

3) մրցույթի անցկացման վայրում զբաղեցնել դիտորդի համար նախատեսված տեղը՝ մասնակիցներից որոշակի հեռավորության վրա՝ պահպանելով լռություն:

8. Դիտորդը մրցույթի աշխատանքներին հետևելիս իրավունք ունի՝

1) բողոքարկելու իր, որպես դիտորդի իրավունքների իրականացման հետ կապված Մրցութային հանձնաժողովի գործողությունները:

9. Դիտորդի կողմից սույն կարգի 7-րդ կետով սահմանված պահանջների չկատարման պարագայում Մրցութային հանձնաժողովն իրավունք ունի հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելու դիտորդին մրցույթի անցկացման վայրից դուրս հրավիրելու մասին, ինչպես նաև տեղեկացնելու համապատասխան կազմակերպությանը, որի ներկայացուցիչն է հանդիսանում դիտորդը:

22.09.2020

VERIFIED OCSP 22.09.2020 16:19:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ